ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Բազալտշին» Ա/Կ

Մասնակցությամբ՝
«Բազալտշին» Ա/Կ-ի նախագահ՝ Դ. Խաչատրյանի, ներկայացուցիչ՝ Հ. Ավետիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով բաց մրցույթ, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի, հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/56-2021 գրությամբ «Բազալտշին»

Ա/Կ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 24.12.2020թ.-ի թիվ 01/13-25613ել գրության հիման վրա, 11.01.2021թ.-ին «Բազալտշին» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 11.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/03 համարի ծածկագիրը:

21.01.2021թ.-ին, 03.02.2021թ.-ին և 10.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.02.2021թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 24.12.2020թ.-ի թիվ 01/13-25613ել գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԲԱՋԱԼՏՇԻՆ» ԱԿ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն «Կապալատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի

(այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 31.01.2020 թվականը:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պայմանագիրը Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման մասով՝ 63555864 /վաթսուներեք միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 59955770 /հիսունինը միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3600094 /երեք միլիոն վեց հարյուր հազար իննսունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ

պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված վերը նշված աշխատանքների գնման պայմանագրից համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ԲԱԶԱԼՏՇԻՆ» ԱԿ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Բազալտշին» Ա/Կ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Բազալտշին» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.01.2021թ.-ի գրությամբ դիմել է «Բազալտշին» Ա/Կ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/56-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Բազալտշին» Ա/Կ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Բազալտշին» Ա/Կ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է համարվում պայմանագիրը ուժի մետ մտնելու օրը, իսկ ավարտը՝ 90 օրացուցային օր:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 28.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 24.12.2020թ.-ի թիվ 01/13-25663ել ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Բազալտշին» Ա/Կ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»: Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 31.01.2020 թվականը: «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պայմանագիրը Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման մասով՝ 63555864 /վաթսուներեք միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 59955770 /հիսունինը միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամի

չափով, չեն կատարվել 3600094 /երեք միլիոն վեց հարյուր հազար իննսունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ: Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է վերջինիս հետ կնքված վերը նշված աշխատանքների գնման պայմանագրից համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

iv. Երևանի քաղաքապետարանի և «Բազալտշին» Ա/Կ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պետական գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման–ընդունման վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը (այսուհետ՝ թիվ 3 Արձանագրություն) և պայմանագրի արդյունքները Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 3 ակտը (այսուհետ՝ թիվ 3 Ակտ):

v. Պատվիրատուն 28.12.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ 13-127742 գրությամբ հայտնել է, որ դուրս գրված էլեկտրոնային հարկային հաշվում արտացոլված «Ընդամենը» գումարը չի համապատասխանում հանձնման-ընդունման արձանագրության և կատարողական ակտում արտացոլված գումարի հետ, հանձնման-ընդունման արձանագրության և ակտի «տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը» մասում արտացոլել աշխատանքների հնարավոր համառոտ բացվածքը, կատարողական ակտի առանձին տողերի գումարների հանրագումարը չի համապատասխանում կատարողական ակտի «Ընդամենը» տողում արտացոլված գումարի հետ, համադրման ակտում բացակայում են ըստ պայմանագրի հավելվածի նախատեսված ծավալները, միավորի գինը և արժեքը, ինչպես նաև ծավալների նկարագրված տողերը չեն համապատասխանում պայմանագրի հավելվածի ծավալներին, ներկայացված փաթեթում բացակայում է ավարտական ակտը համապատասխան ստորագրություններով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ֆինանսական տարվա ավարտով պայմանավորված ժամկետները, Մասնակցին հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում շտկել վերը նշված փաստաթղթերի թերությունները և շտկված տարբերակները ներկայացնել Երևանի քաղաքապետարան:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ.-ի թիվ 26/26-1/56-2021 գրությամբ «Բազալտշին» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի

օդափոխության իրականացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի տեխնիկական բնութագրին, ինչպես նար պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին անհամապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 90 օրացուցային օր:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին և նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Բազալտշին» Ա/Կ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մետ մտնելու օրը, իսկ ավարտը՝ 90 օրացուցային օր:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 28.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 24.12.2020թ.-ի թիվ 01/13-25663ել ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Բազալտշին» Ա/Կ-ի միջև 01.11.2019թ.-ին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»: Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 31.01.2020 թվականը: «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պայմանագիրը Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման մասով՝ 63555864 /վաթսուներեք միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 59955770

/հիսունինը միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3600094 /երեք միլիոն վեց հարյուր հազար իննսունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ: Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է վերջինիս հետ կնքված վերը նշված աշխատանքների գնման պայմանագրից համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միևնույն ժամանակ՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 28.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի լուծման մասին 24.12.2020թ.-ի թիվ 01/13-25663ել ծանուցման հետ նույն օրը Պատվիրատուն Մասնակցին ուղղված թիվ 13-127742 գրությամբ հայտնել է, որ դուրս գրված էլեկտրոնային հարկային հաշվում արտացոլված «Ընդամենը» գումարը չի համապատասխանում հանձնման-ընդունման արձանագրության և կատարողական ակտում արտացոլված գումարի հետ, հանձնման-ընդունման արձանագրության և ակտի «տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը» մասում արտացոլել աշխատանքների հնարավոր համառոտ բացվածքը, կատարողական ակտի առանձին տողերի գումարների հանրագումարը չի համապատասխանում կատարողական ակտի «Ընդամենը» տողում արտացոլված գումարի հետ, համադրման ակտում բացակայում են ըստ պայմանագրի հավելվածի նախատեսված ծավալները, միավորի գինը և արժեքը, ինչպես նաև ծավալների նկարագրված տողերը չեն համապատասխանում պայմանագրի հավելվածի ծավալներին, ներկայացված փաթեթում բացակայում է ավարտական ակտը համապատասխան ստորագրություններով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ֆինանսական տարվա ավարտով պայմանավորված ժամկետները, Մասնակցին հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում շտկել վերը

նշված փաստաթղթերի թերությունները և շտկված տարբերակները ներկայացնել Երևանի քաղաքապետարան:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, Պատվիրատուն 24.12.2020թ.-ին հրաժարվելով Մասնակցի կողմից Պայմանագրի կատարումից, միակողմանիորեն լուծելով այն, միևնույն ժամանակ 28.12.2020թ.-ին թիվ 13-127742 գրությամբ հայտնելով, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում շտկել նույն գրությամբ նշված փաստաթղթերի թերությունները և շտկված տարբերակները ներկայացնել Երևանի քաղաքապետարան, իր գործողություններով վկայել է, որ, այնուամենայնիվ, չի հրաժարվել Պայմանագրի կատարումը ընդունելուց:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ պայմանագիրը լուծված համարելու փաստն արձանագրելու համար, որպես կարևոր և էական նշանակություն ունեցող հանգամանք, պետք է Պատվիրատուի կողմից դրսևորվի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են կատարողի կողմից պայմանագիրը կատարելուց միակողմանիորեն հրաժարվելուն՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի գործողությունները վկայում են պայմանագրային հարաբերությունների շարունակման, վերջինիս պայմանագրի կատարումից չհրաժարվելու մասին:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ. թիվ 26/26-1/56-2021 գրությամբ «Բազալտշին» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/03 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**